

եկեղեցւոյ են արքեպիսկոպոսը... ի սոյն աստիճանի են և կաթողիկոսը »: Աղոնց հակառակ՝ Գորշի սզգասիրութիւնը պատ- ըրիարքի, արքեպիսկոպոսի և մետրապոլիտի յունական աստիճաններէն և չորս խո- նարհագոյններէն զատեց կաթողիկոսակա- նը, և քան զպատրիարքականն ալ բար- ձրացուց, գրեւով. « Որքորոյ դաս գլխա- տըք եպիսկոպոսաց՝ կորոդիկոսք, որք ունին զպատուականագոյն աթոռ »: և յե- տոյ, « Ինճերորդ դաս՝ վերագոյն քան զամենեանն՝ պապիաւս (Հռովմայ) նմա- նեալ քերովբէից », իւր սկզբնագիր օրի- նակին համեմատ՝ որ կը պահուի ի Ս. Ղազար: Սակայն ինքն ալ կը հաստատէ դասածկարգութեանց պակասը Հայոց մէջ, « որպէս Աղուանիցն ուսուցանէ պատմու- թիւն և այլք: Վասն որոյ հարկաւոր է, կ'ըսէ, այս կարգ յեկեղեցի ի հայրապե- տաց կարգիլ: և անփոյթ արարեալ միշտ՝ պարտաւոր ցուցանին (Հայք) յատեան դատաստանի »:

28. Խնդրոյն վրայ իրաւական տեսա- կիտով ալ թէ նայինք, կրնային Հայերն օր մը յանկարծակի պատրիարքութեան բարձրացնել իրենց աթոռը, ինչպէս միա- մտօրէն կարծեցին միջին դարուն: Ո՛չ,

պակասելով իրենց աղոր համար պահան- ջուած պայմանները: Պատուոյ փոփոխու- թիւնը կամ բարձրացումը՝ տիեզերական ժողովոց յատուկ էր ս. Նիրսեսի օրով, երբ Հայք դեռ ի մուսթեան էին ընդհ. եկեղեցւոյ հետ, ինչպէս տեսանք Նիխիոյ և կոստանդնուպոլիսի ժողովոց ընթացքին մէջ<sup>1</sup>. և նոյն իրաւունքն ի գործ դրին Եփեսոսի ու Քաղկեդոնի ժողովներն ալ<sup>2</sup>: Ապա թէ ոչ՝ ամէն մետրապոլիտ խելքը փշած պահուն պիտի կարենար ինք զինքը պատրիարք հռչակել, և այն ժամանակ ոչ նուիրապետութիւն և ոչ մուսթիւն կը մնար եկեղեցւոյ մէջ: Որով և Հայք, որ մասնակցեցան կամ ընդունեցան տիեզե- րական ժողովոց հեղինակութիւնն ու սահ- մանները, չէին կրնար ինքնաստեղծ պա- տիւններու վրայ խորհիլ. ոչ ալ Առշա- կունի մը քմահաճօրէն բաժնել փորձելով Հայոց աթոռը կեսարականէն, կարող էր զայն պատրիարքութեան վերածել: Իսկ ընդհ. եկեղեցիէն զատուելէն յետոյ՝ ան- կարելի էր Հայոց այդպիսի պատիւ մը բնականապէս իւր հին նշանակութեամբ ձեռք բերել օրինաւորապէս, անհաղորդ լի- նելով զայն շնորհող իշխանութեան հետ: (Շարայարելի) . Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ ԶՎԱՐՈՒՑ ԵՐԵՄԵԱՅ ԶԷԼԷՊԻՈՅ

ՅԵՐԱՆԵԼԻՈՍԵ ԿՈՄԻՏԱՍԱՑ ՅԵՂՐՈՒՆ ԻՐԻՄԷ

Մխիթարեան Ձեռագրատան մէջ կայ (Թիւ 621 դարան Բ.բ) գիրք մը՝ Երե- միայ Զէլէպիի Վիճաբանութիւն Յունաց, զոր նոյն իսկ Երեմիա իր ձեռքով գրած է և նուիրած է Տիրացու Կիրակոսին:

Ձեռագրիս սկիզբը մեր նախկին Հայ- րերէն մին, որուն անունը մեզ անծանօթ է՝ հետեւեալ ծանօթութիւնները նշանա- կած է.

« Գրէ Երեմիա չէլէպին ի միումն ի գրոց իւրոց այսպէս. Ռ՛ձԷ (1656). ա»

պրիլի ԻԲ, երեքշաբաթի գիշերին, լուսինն ի կարիճն, ծնանի կոմիտասն, և է կո- միտասս այս կրտսեր եղբայր սոյն Երե- միայ չէլէպոյս, որպէս զրէ գինքնէ նոյն կոմիտաս, որ յետոյ եղև երէց, յոտա- նաւոր յիշատակարանի միւում գրոցն եղ- րօր իւրոյ Երեմիայի, զոր իւրովք ձեռօքն գրեալ է, այսպէս գծէ »:

1. Բապ. 106. — 2. Պամ. Ժոյ. 196-99, 216.

ԺԱՄԱՆԱԿԱԲԱՆԱԿԱՆ

Ա.

Ը Ս Տ Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ա Տ

Պատմութիւնս ըստանալուու երէց յեղբորէս եր-  
զեցանս .  
Որոյ անունն յորջորջիւր Երեմիա չէլէպի Գէօ-  
միւրեանս :  
Բայց նարդենիս որ գրեցաւ՝ կրտսերէ յեղբորէ  
նորայն .  
Պիտակ կոմիտաս երէց՝ ստորագասն նոյնոյ Գէօ-  
միւրեանս  
Ձմիջի թուականիս Հայոց՝ դու հաշուեա եւ լեր  
բաւական (ՌձԽՁ)  
Ձուարճացիր ի գրասանս նագիւի եղբայր պա-  
տուականս :

Արդ Երեմիա չէլէպին էր որդի Տէր  
Մարտիրոսին ժականուամբ Գէօմիւրեմի  
օլլի, գօլով 22 ամօք երէց քան զեղ-  
բայրն իւր կոմիտասս : Մեռեալ էր Երեմիա  
չէլէպին ի թուականին ՌձԽԳ, ի վաթսւըն-  
ամեայ հասակին :

« Դարձեալ նոյն Տէր կոմիտասն զԲէ  
քանի մի տունս ոտանաւորեալ բանս առ  
ոճն սիրելի եւ ծանօթ իւր եւ ի նոսին  
վկայէ վասն Երեմեայ չէլէպոյն լինել իւր  
մեծ եղբայր, եւ են բանք նորին այս .

Իսկ նարդենիս լուր ինձ ո՛վ պարոն աղայ .  
Ձի խնդալոյս խանդաղատել հարկեցայ,  
Յործամ ըզձեր գրօսնութիւն որ լուայ,  
Ձուեւն ձեր ի Գէմէրենին բերկրեցայ :  
Տենչայի յոյժ ի տեսանել միտս ըզնա .  
Քանզի գովեն տեսօք զքաղցրութիւն նորա  
Եւս առաւել երէց եղբայրն իմ Երեմիայ,  
Ի պատմութիւնս ըստանալուու գովէ ըզնա :

« Եւ է Գէմերեներն տեղի գրօսանաց  
հեռի ի քաղաքէն Ըստամպուու իրր վեց  
ժամեան տարակալութեամբ, ուր են կա-  
մարքն ջրոյ աղբերացն սուլղան Սիւլէյ-  
ման արքայի, զոր ընդ այն կամարան  
լեռնէ ի լեռան անցուցեալ է նոյն արքայ  
եւ բերել տուեալ է ի քաղաքն Ըստամ-  
պուլ » :

Ո . Կ .



Ինչպէս նախորդաց մէջ, նոյնպէս եւ  
ընթացիկ տարւոյս մեր Ազգային քանի  
մի Օրացոյցների մէջ տեսնում ենք, « ի  
Ստեղծմանէ Աշխարհիս, 7351 (ամբ) » .  
« ի ջրհեղեղէն, 5089 (ամբ) » : Հետեւա-  
բար Մարդոյ Ստեղծման թուականն լի-  
նում է 7351-1926 = 5425 . Ն . Ք . եւ  
ջրհեղեղին 5089-1926 = 3163, Ն . Ք .  
ուստի եւ Արարչագործութենէն մինչև ջր-  
հեղեղն 5425-3163 = 2262 ամբ : Ս-  
բին թիւերն համապատասխանում են մեր  
Հին կտակարանի ժամանակագրութեանց  
հետ : Սակայն, խորհեալով որ (մեր Օրա-  
ցոյցների յօրինողան բացառեալ) թերեւ  
լինին ոմանք հետաքրքիր՝ ի մասին  
վերլիչեալ թուականների կազմակերպու-  
թեանց, վստահացայ, ըստ շափու կարեաց  
իմոց, աստանօր համառօտիւ տալ նոցա  
բացատրութիւնն :

Հայ կտակարանի սքանչելի թարգմա-  
նութիւնն հիմնեալ լինելով Եօթնասանից  
թարգմանութեանց՝ եւ ի նոցանէ ի կիր  
արկեալ ժամանակագրութեանց վերայ (որ  
տեղի ունեցաւ յԱղբերանդրիս, յամին  
273, Ն . Ք . հրամանաւ Պտղոմէոս ֆիւլա-  
ղիզիոսի, ձեռամբ Եօթնաստուն Յունա-  
գէտ Երբայեցի վարդապետաց), մեր Եկե-  
ղեցին ընդունած է Մարդոյ Ստեղծումն  
որպէս 5425 . Ն . Ք . եւ ջրհեղեղն որպէս  
3163, Ն . Ք . : Նոյնն ընդունած են նաև  
միւս Արևելեան Եկեղեցիք (ոմանք խոն  
ինչ զանազանութեամբ) : Սակայն Արև-  
մրտեանք, անգրտին ի սկզբանէ, հետևողք  
եղած են թուել Երբայայտեւ ժամանակագրու-  
թեանց, ընդունելով 4004 . Ն . Ք . որպէս  
Ստեղծագործութեան թուականն :

Երկուսին ժամանակարանութեանց մէջ  
տարբերութիւնն է 1421 ամբ (5425-  
4004 = 1421), սփոռեալ վեց ժամանա-  
կամիջներէ վերայ : Հետեւեալ Աղիւսական